

Այսպիսով, սեպագիր արձանագրությունների Չալդե դիցանունը (տարբերակ՝ Խալդե, Ալդե, Արդե) Վանի թագավորությունում պաշտվող գլխավոր աստվածության երկնային խորհրդանիշի անվանումն էր: Ըստ դիցաբանական պատկերացումների՝ Չալդեն նույնանուն է Արա-Վահագնին:

К ВОПРОСУ ОБ ЭТИМОЛОГИИ ИМЕНИ БОГА ХАЛДЕ

А. А. Карагезян

Имя верховного бога Ванского царства Halde встречается также в варианте Alde, который является первоначальной формой. Имя Alde состоит из армянского корня *al* (вариант *ala*), который есть и в родственных языках, а также частицы *de*, являющейся компонентом имени. В том же значении выступает и корень *ar* как иной вариант того же корня, т.е. *Arde*.

В имени Halde звук *h* являлся придыхательным *h*, который в клинописи обозначался слогом *hal*. Следовательно, имя бога звучало как Halde, корень которого (*hal*) в армянском языке встречается в вариантах *hալ* и *հել*, восходящих к протоязыковому корню *pel*, отражением которого в армянском являются *pel-հեղ*, *pol-ող*, *p!-հալ*. Однако в некоторых местных армянских диалектах вместо *h* употребляется *h*. По мифологическим представлениям Halde отождествляется с Ара-Вахагном.

TO A QUESTION OF ETYMOLOGY OF THE NAME OF GOD HALDE

A. H. Gharagozyan

The name of supreme god of Van kingdom Halde meets also in version Alde which is an initial shape. The name Alde consists of Armenian root *al* (version *ala*) and particle *de* that meets in related languages, as a component of the name. In the same value the root *ar* is the other version of the same root, that is *Arde*.

In name Halde the sound *h* was *h* which in a cuneiform writing was designated by a syllable *hal*. Consequently, the name of the god sounded as Halde which root (*hal*) in the Armenian language meets in the versions *hալ*-*հել* which were going back to protolanguage root *pel* which reflection in Armenian are *pel-հեղ*, *pol-ող*, *p!-հալ*.

However in some local Armenian dialects instead of *h* used *h*. On mythological concepts Halde identified with Ara-Vahagn.

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XV - XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Ա. Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Հայ ժողովուրդը, կորցնելով պետականությունը, դարերով հայտնվել է հարևան գերիշխանությունների տիրապետության տակ և ենթարկվել տնտեսական, իրավական, կրոնական և ազգային ճնշումների: Այդ պատմական իրողության ընթացքում հայերը պայքարել են անկախության և պետականության ստեղծման համար՝ իրականացնելով ամենատարբեր ձեռնարկումներ: Դրանք

իրենց ժամանակի մտածողության ծնունդը լինելով հանդերձ՝ մեծապես պայմանավորված էին նաև տարածաշրջանի գաղափարախոսական, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական փոխառնչություններով, ներքին և արտաքին գործոններով ու զարգացումներով:

Ժամանակագրական առումով XV-XVII դարերի ազատագրական շարժման կոնկրետ դրսևորումներն առանձնանում են իրենց ներուժի, մոտեցումների բովանդակությամբ և ուղղվածությամբ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, փորձ է արվել այն տարանջատել զարգացման ներքոհիշյալ փուլերի:

1-ին փուլ՝ XV դարի առաջի կես. պայքար կաթողիկոսության նստավայրը էջմիածին տեղափոխելու համար

Այս փուլի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ազգային-ազատագրական շարժումը հոգևոր-եկեղեցական դրսևորում ուներ: Առաջին հայացքից թվում է, թե խնդիրը դավանական կամ «կաթողիկոսական գահի» պայքար էր և ամենևին կապ չուներ ազատագրական շարժման հետ: Թեև XV դարում արդեն առկա էր ներքին պայքարն ինչպես կաթողիկոսական, այնպես էլ բուրժուական դերական թևերի միջև, սակայն այս պարագայում խոսքը ոչ թե այդ հոսանքների միջև առկա դավանական-դասային տարածայնությունների և հակամարտության մասին է, որի արդյունքում Հռոմի հետ մերձեցման միջոցով նրանք փորձում էին ազատվել օտար տիրապետությունից, այլ հայ-հռոմեականության շարժման մասին է, որի կողմնակիցները ձգտում էին լատինադավան դառնալու ճանապարհով լուծել հայերի անկախության հարցը:¹ Չնայած շարժման երկու թևերի պարագայում էլ ազատագրման ուղին անիրատեսական ու պատրանքային էր, այդուհանդերձ լատինադավան դառնալու դիրքորոշման պարագայում կաթողիկոսական նստավայրի աշխարհագրական դիրքը խիստ կարևորվում է, քանզի դրանից մեծապես կախված էր հայ ժողովրդի գոյատևման հետագա պատմական ընթացքը: Կաթողիկոսությունը որպես հայ աշխարհիկ իշխանության գերագույն մարմինների հոգևոր բաղադրիչ, հիմնականում նրանց իսկ պահանջով հաստատվել է այդ մարմիններին ենթակա տարածքում, իսկ պետականության բացակայության պայմաններում զգալի դեր է խաղացել հայ ժողովրդի քաղաքական կյանքում: Այն իրականացրել է ոչ միայն քաղաքական իշխանության շատ լիազորություններ, այլև կատարել էթնոպահպան դեր: Այս իմաստով XV դարում, երբ արդեն հայոց պետականություն չկար, քաղաքական մեծ դերակատարում է ձեռք բերում կաթողիկոսության գտնվելու վայրը, քանզի Կիլիկիայի տարածքն արդեն մասամբ հայաթափվել էր, իսկ բնակչության էլիտար խավի մեջ կաթոլիկամետ տրամադրություններ էին արմատավորվել:² Այդ իսկ պատճառով հայ ժողովուրդը կանգնած էր երկընտրանքի առջև: Կիլիկիայի աշխարհիկ և հոգևոր-եկեղեցական վերնախավի գերակշռող մասը հակված էր միաբանվելու կաթոլիկ եկեղեցու հետ. հայ ժողովուրդն ու եկեղեցին կամ պետք է ընդունեին կաթոլիկություն, ինչը կվտանգեր մեր ազգային ինքնությունը, կամ պետք է հաս-

¹ **Յ. Անասյան**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, էջ 73-80:

² **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Եր., գ. 1-ին, 1957, էջ 487-488; **Յ. Անասյան**, նշվ. աշխ., էջ 50:

տատվեր «հայկական» միջավայրում և պայքարեր սեփական հավատի համար: Վերոհիշյալ առումով կաթողիկոսության նստավայրը էջմիածին տեղափոխելու համար պայքարը թեև հոգևոր, բայց և ազգային ազատագրական բնույթ ուներ, քանի որ հայերին հեռացնում էր պապականությունից և եվրոպական իշխանություններին գործիք դառնալու քաղաքական նպատակից՝ ձեռք բերելով նաև հայոց հավատը, հետևաբար և ինքնությունը պահպանելու միտում: Փաստորեն էջմիածնում կաթողիկոսության վերահաստատմամբ բացառվեց հայ ժողովրդի հավատափոխության և հնարավոր ծուլման գործընթացը: Ըստ էության, այս փուլում հայ ազատագրական շարժումն առանձնանում է հայ աշխարհիկ և հոգևոր-եկեղեցական էլիտայի երկու գաղափարական կողմնորոշմամբ թևերի պայքարով, որն ավարտվում է հայ-հռոմեականության դիրքորոշման կողմնակիցների պարտությամբ:

2-րդ փուլ՝ XVI դարի առաջին կես. Պարսկաստանի լծից ազատագրվելու Սալմաստեցու առաքելությունը

Ազատագրական շարժման այս փուլն առանձնանում է խիստ կարևորվող այն երևույթով, որ հայ հասարակական-քաղաքական որոշ գործիչների գիտակցության մեջ աստիճանաբար սաղմնավորվում էր այն գաղափարը, որ ստեղծված իրավիճակը պայմանավորված է ազգային պետականության բացակայությամբ:³ Սակայն դրան հասնելու ուղիների հարցում հիշյալ գործիչների գաղափարախոսությունում գերիշխում էր ոչ իրատեսական մոտեցումներ: Չնայած նրանք իրատեսորեն էին գնահատել սեփական ուժերով ազատագրվելու, ինչպես նաև այդ հարցում Անդրկովկասյան ժողովուրդներից օգնություն ստանալու հնարավորության և հավանականության ցածր աստիճանը, այնուամենայնիվ կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցու նախաձեռնությամբ 1547 թ. էջմիածնում հրավիրված ժողովում ընտրեցին ազատագրության անիրատեսական ուղի՝ Պարսկաստանի լծից ազատագրվելու օգնության խնդրանքով դիմելով Եվրոպայի կաթոլիկ եկեղեցուն և երկրներին:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս փուլում շարժման նախաձեռնությունը հոգևորականության վերնախավինն էր: Վերջիններս, որդեգրելով հայ հեթանոս քրմերի մարգարեանալու ռազմավարությունը, իրենց հոգևոր-քաղաքական գործունեությունն իրականացնում էին նաև տեսիլների ու գուշակությունների միջոցով: Այդ իսկ մոտեցմամբ և, հագուրդ տալով եվրոպական երկրների աշխարհիկ ու լատին հոգևոր գործիչների դիվանագիտական խաղերին, հայ կղերաեկեղեցական գործիչները վերակենդանացրին Ներսես Պարթևի միջնադարյան լեզենդը և ազգային-ազատագրական խնդրին հաղորդեցին երևակայական լուծում:⁴ Ուստի պատահական չէր, որ, ի տարբերություն նախորդ փուլի, որն ուներ կաթոլիկությունից հայ ժողովրդին հեռացնելու միտում, այս փուլում շարժման գաղափարակիրները ձգտում էին հայ ազատագրական պայքարի հաջողությունը կա-

³ **Յ. Անասյան**, նշվ. աշխ., էջ 40; **Ա. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., գ. 2-րդ, 1959, էջ 395:

⁴ **Ա. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., գ. 1-ին, էջ 272-274; **Ծ. Պ. Աղայան**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, էջ 24-26; **Մեսրոպ Երեզ**, Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց Հայրապետի (Սուփերք հայկականք), Վենետիկ, 1853, հ. 2, էջ 89-90:

պել Յոննի հոգևոր և Եվրոպայի որոշ երկրների ռազմական աջակցության հետ:⁵ Այս տեսակետի կողմնակիցները չկարողացան կռահել, որ Եվրոպական երկրները հակապարսկական քայլ կատարելու մտադրություն չունեն, քանզի այդ երկրներին անհանգստացնում էր թուրքական գործոնը, որի դեմ՝ հանձինս Պարսկաստանի, տեսնում էին հնարավոր դաշնակցի: Փաստորեն հայերի ազատագրական շարժման այս փուլի ներուժը Եվրոպական հայեցակարգի կողմնակիցներ էին, որոնք պայքարին սխալ միտում էին հաղորդել՝ այն ուղղորդելով միայն Պարսկաստանի դեմ, միաժամանակ սեփական անկախության համար ապավինելով օտար՝ պարսկամետ Եվրոպական հոգևոր ու աշխարհիկ իշխանություններին:

3-րդ փուլ՝ XVI դարի երկրորդ կես. թուրքական և պարսկական շահագործումից ազատագրվելու Սեբաստացու ձեռնարկումները

Չնայած հայ ազատագրական շարժման այս փուլի գաղափարակիրը նորից հոգևորականության վերնախավն էր, սակայն պայքարն առանձնանում էր համախոհների շրջանակի ընդլայնմամբ՝ ներառելով նաև աշխարհիկ միջավայրը: Շարժման կողմնակիցները կաթողիկոս Միքայել Սեբաստացու նախաձեռնությամբ 1562 թ. Սեբաստիայում հրավիրված ժողովում որոշում են դիմել Յոննի պապին և Եվրոպական իշխանություններին՝ հայերին թուրք-պարսկական տիրապետությունից ազատագրելու խնդրանքով: Ակնառու է, որ այս փուլում պայքարն ուղղվում էր ինչպես Պարսկաստանի, այնպես էլ Թուրքիայի դեմ և, ի տարբերություն նախորդի, պատվիրակությունը գլխավորում էր աշխարհիկ անձնավորություն՝ Աբգար Եվդոկացին կամ Թոխատեցին, ինչը հայերի ազատագրման Եվրոպական հայեցակարգի համախոհների բանակում հոգևոր և աշխարհիկ ուժերի վերադասավորման վկայություններից է:

Այս նախաձեռնությունը նույնպես որևէ արդյունք չտվեց: Չնայած պատմական իրավիճակին՝ մասնակիորեն գտնվել էր հարցի լուծման բանալին: Ի դեմս Թուրքիայի՝ կատարվել էր ընդհանուր թշնամու ճիշտ ընտրություն: Սակայն հայ գործիչները Եվրոպական երկրների հակաթուրքական տրամադրությունների պայմաններում չկարողացան դիվանագիտորեն օգտագործել թուրքերի՝ տարածաշրջանի քրիստոնյա բնակչությանը ոչնչացնելու, ձուլելու ճանապարհով նրանց տարածքում հաստատվելու քաղաքականություն վարելու իրողությունը: Ի տարբերություն հայերի՝ Թուրքիան լավագույնս օգտագործեց տարածաշրջանի և Եվրոպական պետությունների ներքին և արտաքին հակամարտություններն ու դարձավ տարածաշրջանի հզոր գերտերություններից: Այս, ինչպես նաև Յոննի պապերի երբեմնի հեղինակության անկման ու Եվրոպական պետությունների ներքին ու արտաքին հակասությունների սրման իրավիճակում հայերի ազատագրության հարցը չէր կարող լուծվել: Այս փուլը՝ առաջ քաշված խնդիրներով, դրանց բնույթի և լուծումների ընդգրկմամբ համազգային էր, սակայն շարժման գաղափարակիրներն ընտրել էին անիրատեսական՝ շահագործողների միջոցով ճնշումից ազատագրվելու ուղի:⁶ Բնական է, որ սեփական ժողովրդին շահագոր-

⁵ **Գ. Գալոյան**, Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Եր., 1982, էջ 73-74:

⁶ **Կ. Մարքս և Փր. Էնգելս**, Сочинения, т. 4, М., 1955, с. 14.

ծող երկրները չէին կարող այլ ժողովուրդների ազատագրական պայքարի երաշխավորը լինել և նրանց բոլոր մղումները լոկ շահախնդրական էին:

Այս փուլի գործիչների ուշադրությունից վրիպել էր ինչպես հիշյալ, այնպես էլ այն հանգամանքը, որ Արևմուտքի զարգացող բուրժուազիային արդեն հետաքրքրում էին Յնդկաչինի, Յնդկաստանի և Ամերիկայի երկրները և ոչ թե թուրք-պարսկահպատակ քրիստոնյաները: Նրանք անհեռատեսության պատճառով չէին կռահել, որ եվրոպական զարգացող բուրժուազիային այլևս չէր գրավում արևելյան քրիստոնյաներին հպատակեցնելու Յոռնի քարոզչությունը և ցանկացած պահի նրանք համագործակցում էին Թուրքիայի հետ՝ «թուրքական վտանգը» ծառայեցնելով սեփական շահերին: Բացի այդ, Պարսկաստանի և Թուրքիայի հակամարտությունն ու պարբերական պատերազմները թուլացնում էին հզոր Թուրքիային և նրա ուշադրությունը շեղում եվրոպայից, հանգամանք, որում մեծ էր նաև Արևմուտքի երկրների քաղաքականության դերը: Թուրքիայում և Պարսկաստանում բնակվող քրիստոնյա ժողովուրդներին պաշտպանելու «բարեկամական» մղումներն էլ պայմանավորված էին եվրոպական երկրների կողմից այդ հակասությունները սրելու քաղաքականությամբ: Բնականաբար հայ ազատագրական շարժման գաղափարակիրների մի մասը որոշակիորեն գիտակցում էր դա, սակայն, պայքարի այս փուլում եվրոպական երկրների հիշյալ մոտեցումները բավարարում էր հայ աշխարհիկ և հոգևոր վերնախավի պահպանողական հատվածին, քանզի նպաստում էր նրանց նպատակների իրականացմանը, իսկ բարեփոխումների կողմնակից վերնախավին այս երկրներում տիրող ավատատիրական համակարգը թույլ չէր տալիս բավարար ներուժ կուտակելու, և նպաստավոր միջավայր չկար սեփական հեղինակության ու իշխանության ձևավորման ուղղությամբ պայքարը հաջողությամբ ավարտելու համար:⁷

4-րդ փուլ՝ XVII դարի առաջին կես. անկախության ձեռքբերման Յակոբ Ջուղայեցու նախաձեռնությունները

XVII դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժումն առավել ակտիվացավ ժողովրդի տնտեսական ծանր իրավիճակի, Պարսկաստանում սկսված «նոքարների», Վրաստանում՝ Գիորգի XI-ի ու Կախեթի թագավոր Արչիլի ապստամբությունների ազդեցությամբ: Պարսկաստանի և Թուրքիայի դեմ վրացիների պայքարին միանալու փորձ են կատարում նաև հայ հոգևոր ու աշխարհիկ ազատամիտ գործիչները, որոնք 1677 թ. էջմիածնում գումարված ժողովում որոշում են ջանքերն համատեղել:⁸

Այս փուլի առաջամարտիկն ու գաղափարակիրը կաթողիկոս Յակոբ Ջուղայեցին էր: Նրա «լուսավորական» մի շարք նախապատրաստական միջոցառումներով նշանակալից թափ հաղորդվեց հայոց հայրենասիրական ոգու բարձրացմանն ու ազատագրական շարժմանը: Ջուղայեցու համոզմամբ՝ Յայաստանի ազատագրման առաքելությունը վերապահված էր Պարսկաստանի հպատակությամբ բնակվող քրիստոնյաներին, որոնց պետք էր նախապատրաստել այդ

⁷ *К. Маркс и Фр. Энгельс*, Сочинения, т. 16, ч. II, М., 1936, с. 22; *Գ. Անասյան*, նշվ. աշխ., էջ 73-84; *Առաքել Դավրիժեցի*, Պատմություն, Եր., 1988, էջ 263-264:

⁸ *Ա. Գովհաննիսյան*, նշվ. աշխ., գ. 1-ին, էջ 116-118, 129, գ. 2-րդ, էջ 196; Письмо Пфальцакого курфирста Иоанна Вильгельма къ Грузинскому принцу Георгию, 3-го мая 1698 г., *Г. А. Эзов*, Сношения Петра Великого с армянским народом, С-Пб., 1898, док. № 1, с. 1.

պայքարին, իսկ խնդրի վերջնական լուծման համար նա դեռևս ակնկալում էր Յոզեֆի և Եվրոպական երկրների օգնությունը:⁹ Չնայած նա հայերի ազատագրման գործում Եվրոպական աջակցությանը սոսկ օժանդակ դեր էր հատկացնում, սակայն այն պետք է ձեռք բերվեր դավանական զիջումների գնով: Բացի այդ, այս փուլում շարժման գաղափարակիրների հույսը տվյալ պահին Եվրոպայի ամենահզոր երկրի՝ Ֆրանսիայի օգնությունն էր, մինչդեռ վերջինս շահագրգռված չէր ընդհարվելու Թուրքիայի հետ և փորձում էր հայերին օգտագործել հակաթուրքական դաշինքի ստեղծման գործում:¹⁰ Նրանք չէին կարողացել կանխատեսել, որ Ֆրանսիայի նպատակը ոչ թե թուրքահպատակ քրիստոնյաների ազատագրումն էր, այլ Մերձավոր Արևելքի գաղութացումն ու մետաքսի առևտրի մենաշնորհի ձեռքբերումը: Վերջինիս համար ֆրանսիական միսիոներները շահարկում էին հայ ազատագրական մղումները: Նույն մոտեցումներն ունեին նաև կաթոլիկ հոգևորականները, որոնք հայերի մեջ սերմանում էին այն կեղծ բարոյական պատրանքը, որ միայն ֆրանսիական թագավորը կարող է նրանց փրկել բռնակալական տիրակալությունից, որին և զոհ էին դարձել Հակոբ Զուղայեցին ու նրա համախոհները:

5-րդ փուլ՝ XVII դարի երկրորդ կես. առևտրային բուրժուազիայի «ֆրանսիական» ազատագրական նախաձեռնությունները

Ի տարբերություն նախորդ փուլերի, որոնց նախաձեռնողները հոգևոր-էջմիածնական թևի և արևելահայ պահպանողական բուրժուազիայի ներկայացուցիչներն էին, այս փուլն առանձնանում է նրանով, որ ազատագրական պայքարն արդեն ներառել էր հայ հոգևոր ու աշխարհիկ հասարակական գործիչների լայն շրջան և առաջամարտիկի դերակատարումն ստանձնել էր արևմտահայ առևտրային բուրժուազիան՝ հենվելով հոգևոր-սասկան հոսանքի վրա: Հասարակական կառավարման ոլորտում հաջողության չհասնելով՝ առևտրային բուրժուազիան գործնական քայլեր սկսեց ազատագրական շարժման ուղղությամբ: Սակայն ելակետային առումով այս փուլում նույնպես էական առաջընթաց տեղի չունեցավ, միայն փոխվեցին «ազատարար» երկրների աշխարհագրությունն ու դերակատար քաղաքական դեմքերը:¹¹ Այս փուլի միակ նվաճումը զինված ապստամբության՝ որպես անկախության ձեռքբերման նախապայմանի գաղափարական ձևավորումն էր: Այդուհանդերձ հայ ազատագրական շարժման գաղափարական հիմքը XVII դարի վերջին թերևս նույնն էր՝ Յոզեֆի պապի և Ֆրանսիայի օգնությամբ ազատագրվելու տեսլականը,¹² միայն այն տարբերությամբ, որ այդ գաղափարախոսության մեջ լատինասիրությունն առավել մեծ տեղ էր գրա-

⁹ **Ա. Հովհաննիսյան**, *ԳՂ*, աշխ., գ. 2-րդ, էջ 194-196; **Բ. Սարգիսեան**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխթարեանց ի Վեներտիկ, հ. Բ, Վեներտիկ, 1924, էջ 1195-1196:

¹⁰ **Ա. Հովհաննիսյան**, *ԳՂ*, աշխ., գ. 2-րդ, էջ 189-191, 197-200:

¹¹ **Հ. Անասյան**, *ԳՂ*, աշխ., էջ 274:

¹² Կիլիկիայի հայոց կաթողիկոս Խաչատուր Գաղատացու նամակը Լուդովիկ XIV-ին, Հալեպ, 12 փետր. 1663 թ.- **Հ. Անասյան**, *ԳՂ*, աշխ., վավերագիր № 1, էջ 282-285; Խոջա Մուրատի ուղերձը՝ Լուդովիկ XIV-ին, հունվար 1672 թ.- **Հ. Անասյան**, *ԳՂ*, աշխ., վավերագիր № 9, էջ 299-300:

վում,¹³ ինչն անընդունելի էր թեկուզ այն պարզ պատճառով, որ ենթադրում էր հոգևոր և քաղաքական կախվածությունն Ռոմից և ֆրանսիական իշխանություններից:

6-րդ փուլ՝ XVII դարի վերջ. Իսրայել Օրու ազատագրական «եվրոպական» առաքելությունը

XVII դարավերջի ազատագրական շարժման հետագա ընթացքը զարգացնում է Իսրայել Օրին: Նա ձգտում էր եվրոպական երկրներին և որոշակի քաղաքական անձանց շահագրգռելու միջոցով ներքաշել հայ ազատագրական պայքարում, նվաճել Պարսկաստանի, ապա Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական հողերը և ստեղծել հայկական երկու թագավորություն:¹⁴ Սակայն նրան չհաջողվեց բավարար ուժեղ ներգրավել այդ գործում, քանզի Թուրքիայի դեմ համատեղ պայքարելու համար Պարսկաստանի հետ ընթացող բանակցությունների փուլում ո՛չ Ռոմի պապը, ո՛չ էլ Ռոմեական կայսրը պարսիկների դեմ արշավանք նախաձեռնելու նպատակ չունեին:¹⁵

Իր նախաձեռնությունն իրականացնելու նպատակով Օրին Անգեղակոթ գյուղի Մելիք-Սաֆրազի միջոցով Սյունիքի մելիքներին համոզում է, որ հայերի ազատագրման միակ երաշխիքը հայ և կաթոլիկ եկեղեցիների միավորումն է: Փաստորեն Օրին և Սյունիքի մելիքները նույնպես այն պատրանքներով էին տարված, թե եվրոպական պետությունների աջակցությամբ կարելի է վերականգնել հայոց թագավորությունը: Նրանք այդ գաղափարի համար նույնիսկ համաձայնվում են զոհել հայոց հավատքը¹⁶ և ամենայն հավանականությամբ այդ քայլին զնում էին այն պատճառով, որ եկեղեցական շատ գործիչներ, որոնք մինչ այդ ակտիվորեն մասնակցում էին ազգային-ազատագրական շարժմանը, XVII դարի վերջին արդեն հրաժարվել էին այդ պայքարից: Վերջիններս հավանաբար երկյուղում էին ազատագրական շարժումից, քանի որ այն կարող էր վերածվել տիրող կարգերին սպառնացող սոցիալական պայքարի, և որպես խոշոր շահագործողի՝ առաջին հերթին ուղղվել իրենց դեմ: Դրա հետևանքով այս փուլում եկեղեցին ոչ միայն չի մասնակցել ազատագրական գործընթացին, այլև փորձել է խոչնդոտել դրան:

Ազատագրական շարժման այս փուլի հիմնական առանձնահատկությունն այն է, որ XVII դարավերջին հայ եկեղեցին՝ որպես շահագործման գործիք և խոշոր շահագործող, իր հետ թշնամացրել էր նաև հայ մելիքներին, և ամենայն հավանականությամբ այդ թշնամանքի հետևանք էր նաև մելիքների՝ դավանափոխությանը հանգեցնող որոշումը:¹⁷

¹³ **Յ. Անասյան**, նշվ. աշխ., էջ 2261-266:

¹⁴ Послание армянскихъ меликовъ къ Пфальцкому курфирсту Іоанну Вильгельму 29-го апреля 1699 г.- **Գ. Ա. Էզով**, указ. раб., док. № 5, с. 9-16; **Ա. Յովհաննիսյան**, նշվ. աշխ., գ. 2-րդ, էջ 272:

¹⁵ **Ա. Յովհաննիսյան**, նշվ. աշխ., գ. 2-րդ, էջ 262:

¹⁶ Послание армянскихъ меликовъ къ Пфальцкому курфирсту Іоанну Вильгельму 29-го апреля 1699 г.- **Գ. Ա. Էզով**, указ. раб., док. № 5, с. 9-16.

¹⁷ **Ա. Յովհաննիսյան**, նշվ. աշխ., գ. 2-րդ, էջ 323:

Այս փուլը առանձնահատուկ է նաև նրանով, որ առաջին անգամ փաստաթղթային ձևով մշակվեց պարսկահպատակ հայերի ազատագրման ծրագիրը, որում քննարկվում էին անհրաժեշտ զորատեսակներն ու դրանց քանակությունը, հնարավոր դաշնակիցների, զորքերի շարժման ուղիների ու մատակարարման, հայ ժողովրդին զինելու, ռազմարվեստին ծանոթացնելու և զինված ապստամբությանը նախապատրաստելու հետ կապված հարցեր:¹⁸ Այս փուլում փաստորեն բացահայտվեց հայ առևտրական բուրժուազիայի ազատագրական տրամադրությունները, մոտեցումներն ու հայացքները:

Այդուհանդերձ ազատագրման համար Արևմուտքից օգնություն ստանալու հայերի հույսերը կրկին չարդարացվեցին իսպանական գահը նվաճելու համար XVII դարի վերջին Եվրոպայում ծավալված հակամարտությունների հետևանքով: Այդ մրցապայքարում Ֆրանսիան փորձում էր թուրքիային լարել Ավստրիայի դեմ և Պարսկաստանում ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել՝ իր առևտրականների գործունեությունն հեշտացնելու համար, որոնք մրցակցության մեջ էին հայ առևտրականների հետ, իսկ Ավստրիան նոր էր ավարտել թուրքիայի հետ պատերազմը և Ֆրանսիայի դեմ պատերազմելու նախապատրաստության շրջանում չէր ուզում նորից ընդհարվել նրա հետ: Բացի այդ, Ավստրիան փորձում էր օգտվել Անգլիայի ու Յոլանդիայի հակաֆրանսիական տրամադրվածությունից, վերջիններիս և թուրքիայի հետ համաձայնություն կնքել և զորքերը թուրքական ճակատից տեղափոխել Ֆրանսիայի դեմ:

Այս իրավիճակում հայերը եվրոպական երկրներին դեռևս չէին ձգում, և մնում էր միայն առավել իրական ուժի հետ կապել ազատագրման համար ակնկալվող օգնությունը,¹⁹ որի գաղափարն արդեն հասունացել էր և իրականացվեց հետագայում:

ЭТАПЫ И ОСОБЕННОСТИ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ АРМЯНСКОГО НАРОДА В XV -XVII ВЕКАХ

А. С. Хачатрян

Армянский народ столетиями находился под турецко-персидским игом и подвергался всевозможным преследованиям и насилиям. Турки, в отличие от персов, с психологией завоевателя, всегда осуществляли самоутвержденческую стратегию и стремились завоевать статус коренных жителей путем уничтожения подданных-христиан. Армянские духовенческие и светские деятели в борьбе за освободительное движение не могли дипломатически воспользоваться не только этой ситуацией, но и антитурецкой настроенностью европейских стран и их освободительные инициативы не осуществлялись.

Отдельные проявления освободительных движений армянского народа в этом периоде обособляются своим потенциалом, содержанием и политическим унастроением идейного подхода, на основании которых делается попытка разобщить этапный ход этого движения.

¹⁸ Донесение Израэля Оря Пфальцкому курфирсту Иоанну Вильгельму 22-го сентября 1699 г.- Г. А. Эзов, указ. раб., док. № 9, с. 28-43.

¹⁹ **Գ. Ա. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 76:

THE STAGES AND DISTINGUISHING FEATURES OF ARMENIAN LIBERATION MOVEMENT DURING THE XV AND THE XVII CENTURIES

A. S. Khachatryan

The Armenian nation has been under the dominion of Persia and Turkey for centuries, and has experienced cruel violence and pressure. Unlike Persia, Turkey with a psychology of an invader has always led a self-determining strategy and has tried to gain the status of a local habitant through elimination-assimilation of Christians. Whereas, during the struggle for independence Armenian spiritual and secular leaders couldn't make diplomatic use of this state and the anti-Turkish attitude of the European countries, and all their initiations were left unfinished.

The manifestations of the Armenian struggle for liberty of this period are noticeable for their potential, for the contents and direction of the ideological approaches, on the basis of which it has been attempted to divide it into several stages.

ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՆԱԽՇԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍԵՎԱՆԻ ԱՎԱՋԱՆԻ ԲՐՈՆՁԻ ԴԱՐԻ ԶԱՐԴԱՐՎԵՍՏՈՒՄ

Մ. Ս. ՔԵՇԻՇՅԱՆ

Սևանի ավազանի բրոնզի դարի (մ.թ.ա. 35-11դդ.) զարդարվեստում ինքնատիպ և յուրօրինակ զարդանախշումներով հանդես է գալիս երկրաչափական նախշաձևը: Այն իր կիրառական նշանակությունն է գտել ինչպես խեցեգործական և մետաղագործական մնուշների զարդարման արվեստում, այնպես էլ փայտարվեստում:

Ավազանի հնագիտական նյութի երկրաչափական նախշը իրականության ամենաընդհանուր տարածական ձևերից էլնող զարդաձևերն են: Սկզբնապես այս զարդանախշը ծագել է տեխնիկական և խորհրդանշանային զարդանախշերի միաձուլման շնորհիվ, որն էլ ձևավորել է պատկերների առավել բարդ համակցումներ՝ կոնկրետ պատմողական նշանակությունից զուրկ: Հրաժարվելով սյուժետային հիմքից, ավազանում ապրող մարդը զարդանախշի այս տեսակում ուշադրությունը բևեռել է առանձին բնական մոտիվների խիստ հաջորդայնության վրա: Յուրաքանչյուր երկրաչափական ձև ի սկզբանե իրականում գոյություն ունեցող ձև է՝ վերջնականապես ընդհանրացված և պարզեցված: Ամեն մի զարդանախշ հիմնականում «երկրաչափական» է և ստեղծվում է ուղիղ, թեք և կոր գծերի ու ֆիգուրների զուգակցումներից: Դրանցում, որոշ դեպքերում, կարող են ներխուսվել բույսերի, կենդանիների, թռչունների կամ մարդկանց ուրվագծային պատկերներ: Բայց դրանք միայն միասնական զարդանախշ ստեղծելու հնարանք և միջոց են և հանդես են գալիս որպես ամբողջական զարդանախշային պատկերի արտահայտչականությունը շեշտող տարրեր:

Սևանի ավազանի հնագիտական նյութի երկրաչափական զարդանկարներում հիմնական տարրերն են.

ա) փոս կամ ուռուցիկ կետերը,

բ) ուղիղ, բեկյալ, ալիքավոր գծերը՝ թե՛ առանց կետերի և թե՛ դրանց զուգակց-